Հետազոտական աշխատանք

Մոդուլ՝<<Զբոսաշրջության և զբոսաշրջային ծառայությունների ճանաչողություն>>

Թեմա-<<Զբոսաշրջային ծառայություններ մատուցող սուբյեկտներին ներկայացվող պահանջները,պարտավորությունները և այդ ծառայությունների տրամադրման ուղղությունները

Դասախոս՝Ք.Հակոբյան

Այցելություն Hrazdan Tour տուրիստական կազմակերպություն իրենց պատմությանը ծանոթանալու համար

1)-Ինչպե՞ս ստեղծվեց Hrazdan Tour տուրիստական կազմակերպությունը:Մի փոքր կպատմե՞ք դրա մասին:

-Իհա՛րկե:Ես իմ գործունեությունը սկսել եմ 2017թ-ին,երբ Հրազդանում դեռ որպես այդպիսին չկար <<Տուր>> գաղափարախոսությունը:Ես սկսեցի աշխատել արտասահմանցիների հետ:Նրանց ներկայացվում էր կոնկրետ Հրազդանի տեսարժան վայրերը:Իսկ հետո,արդեն որպես տուրիստական կազմակերպություն Hrazdan Tour-ը սկսել է գործել 2021թ-ից,-նշել է Hrazdan Tour-ի հիմնադիր-տնօրենը:

2)-Շատ լավ,շնորհակալություն,անցնենք հաջորդ հարցին:Արդյոք Դուք ունե՞ք

գրասենյակ:Եթե այո,ապա որտե՞ղ է գտնվում այն:

-Այո,մենք ունենք գրասենյակ:Այն գտնվում է Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասում:

3)-Խնդրեմ կասեք,թե ի՞նչ է խորհրդանշում Ձեր լոգոն և ինչպե՞ս ընտրեցիք այն:

-Լոգոյի վրա պատկերված է Հրազդան քաղաքի խորհրդանիշը՝Կենտրոն թաղամասում գտնվող խաչը:Այն բաղկացած է 4 խաչից,որոնք խորհրդանշում են Հրազդանի 4 եկեղեցիները.Մաքրավանի,Վանատուրի,

Կոճռոի և Ջրառատի:Եվ լոգոյի ներքևի հատվածում պատկերված է Հայաստանի դրոշը:

4)-Բարի,հիմա՝մյուս հարցը:Արդյոք հասանելի՞ եք օնլայն հարթակում և ունե՞ք բավականաչափ լսարան:

-Այո,անշուշտ,մենք հասանելի ենք օնլայն հարթակում,ունենք նաև պաշտոնական կայքէջ:Եվ իհարկե հասանելի ենք թե՛ Ինստագրամում(Hrazdan_tour),թե՛ Ֆեյսբուքում(Hrazdan tour),որտեղ մարդիկ ավելի ակտիվ են:

5)-Շա՛տ լավ,իսկ ինչպե՞ս եք հաճախորդին ներկայացնում Ձեր տուր-փաթեթները:

-Տուր-փաթեթները կազմվում են մեր տուրմենեջերների կողմից,իրենք են ընտրում վայրը,ուղղությունները և այլն:Այն ներկայացվում է օնլայն հարթակում,ապա փոխանցվում է զբոսավարին:

6)Շնորհակալություն,իսկ զբոսաշրջության ոլորտում անհրաժե՞շտ են հստակ հմտություններ կամ բնավորության գծեր:

- Զբոսաշրջության ոլորտում ամենակարևորն այն է,որ շատ սիրեք Ձեր երկիրը և յուրաքանչյուր զբոսավար առաջինը պետք է լինի ոչ

կոնֆլիկտային,զիջող,ինքնավստահ,ճկուն,պրոակտիվ,շփվող,ազգային դիմագծի կրող և այլն,-նշեց Hrazdan Tour-ի զբոսավարներից՝Սոնան:

7)-Հիանալի՛,իսկ հիմա վերջին հարցը:Ինչպե՞ս եք հաղթահարում Ձեր ճանապարհին հանդիպած խոչընդոտները:

-Իրականում խոչընդոտներ կարող են հաճախ առաջանալ ու տարբեր պատճառներով:Կարող են առաջանալ մարդկային փոխհարաբերությունների ժամանակ,օրինակ,եթե խնդիրը զբոսավարի և զբոսաշրջիկի մեջ է,ինչպես նշեցի,զբոսավարը պետք է լինի ոչ կոնֆլիկտային և զիջող,որովհետև շփվում է տարբեր բնավորությամբ մարդկանց հետ:Այդ ժամանակ փորձում ենք խնդիրը մոռացության մատնել,հյուրասիրություն ենք կազմակերպում կամ պատմություններ ենք պատմում,հումորներ,լոկալ մարդկանց կենցաղից պատմություններ և այլն:Խնդիրներ

կարող են առաջանալ նաև տեխնիկական առումով:Նման դեպքերում հիմնականում խնդիրը լուծվում է տվյալ պահին,- պատասխանեց Սոնան:

-Շատ բարի,շա՛տ շնորհակալ եմ հարցազրույցին մասնակցելու համար,մաղթում եմ Ձեզ բարի և անխափան աշխատանքային գործունեություն,թող հետագայում ունենաք նաև մասնաճյուղեր Հայաստանի այլ մարզերում և քաղաքներում ևս:

Հետազոտական աշխատանքի իրականացնող՝ Անգելինա Տոնոյան

EXTREME TOUR

Հիմնադիր և տնօրեն ՝ Երեմ Հարությունյան
Կենտրոնը ՝ գ. Լեռնանիստ

1.Ինչո՞վ է պայմանավորված ձեր տուրիստական կազմակերպության անվանումը

-Այն պայմանավորված է իմ նախասիրություններով:Էքստրիմի սիրահար եմ,դաշտում կային շատ անուններ,որոշեցի, որ Extreme-ը լավ անուն է և փորձում եմ տուրերում ներառել էքստրիմը, որ լինի անվանը համապատասխան:

2. Որտե՞ ղ է գտնվում գործակալության կենտրոնը:

-Գրասենյակ որպես այդպիսին չունենք, հիմնականում աշխատում ենք ինտերնետային, զանգերով:Այսինքն ՝ գրասենյակ այս պահին չկա և կարիք էլ դեռևս չունենք:

3.Ո՞վ է գրասենյակի՝կազմակերպության հիմնադիրը և որքա՞ն ժամանակ է, որ գործում է կազմակերպությունը:

-Հիմնադիրը ես եմ՝ Երեմ Հարությունյանս, գործում է արդեն 3 տարի:Այս տարի որոշ պատճառներով դասարանական տուրերի մասով դադար ենք տվել, բայց կազմակերպությունը հիմա գործում է, բացի վերոնշյալ ծառայությունից:Կարքը գնում է represing-ի, այսինքն ավելի է նորացվում և ցանկություն կա դարձնելու ավելի լավը և

հասանելի հարթակ:Ինչ վերաբերում է ինձ՝ տուրիզմի ոլորտում եմ արդեն 6-7 տարի:

4. Ինչպիսի՞ն է տարեկան զբոսաշրջիկների վիճակագրությունը:

-Extreme tour-ը զբաղվում է միայն ներգնա տուրիզմով և կապ չունի արտագնայի հետ:Եթե հաշվենք տարեկան դասարանական տուրերը և այլն, ապա գրեթե 2000 կամ ավել մարդ օգտվում է մեր փաթեթներից:

5.Ինչպիսի՞ հմտություններ են պետք Ձեզ մոտ աշխատանքի ընդունվելու համար:

-Ամենակարևորներից մեկն այն է, որ անձը գոնե մի փոքր տեղյակ լինի տուրիզմից:Բացի այդ սիրի գործը,ունենա ճարպկություն:Աշխատանքային փորձ ասվածին դեմ եմ,քանի որ անձը կարող է չունենալ փորձ, բայց ունենա ցանկություն և արագ սովորել ամեն բան:

6.Ինչպիսի՞ աշխատակազմ ունեք հիմա և կարիք կա՞ նոր աշխատողների:

-Այս պահին մեզ մոտ աշխատում են զբոսավարներ, դպրոցական տուրերի համար խաղավարներ,ինչպես նաև ունեմ օգնական,որի

հետ եմ կատարում հիմնական աշխատանքը:Այս պահին նոր աշխատողների կարիք չունենք,բայց գարնան շրջանում շատերի կարիքը ունենում ենք:

7.Ո՞ր սեզոնին է հաճախորդների մեծ քանակ գրանցվում:

-Մայիսից մինչև հունիսի կես,այսինքն՝ մոտ 1-1,5 ամիս և ձմռանը՝ հիմնականում դեկտեմբեր-հունվար ամիսներին:

8. Որո՞նք են ձեր տուրի շրջանակներում հիմնական այցելված վայրերը:

-Հիմնական այցելված վայրերը բավականին շատ են,բայց ամենատարածվածներից են Գառնին,Գեղարդը,Աշտարակի ուղղությունը,եկեղեցիներ՝ Սաղմոսավանքն ու Օհանավանքը:ՀՀ-ում չկա չայցելված ուղղություն բայց հիմնականում Կոտայքի,Արագածոտնի տուրիստական գոտիներն են,կարծում եմ:

9.Այս 3 տարիների ընթացքում եղե՞լ են բողոքներ:

-Այո,իհարկե եղել են,առանց բողոքների անհնար է աշխատել:

10. Իսկ ինչպիսի՞ն է արտերկրացի զբոսաշրջիկների վիճակագրությունը:

-Չենք զբաղվում արտերկրացի զբոսաշրջիկներով:Ունեցել ենք փոքր խմբեր,որոնց ընդունել ենք ձմռանը,ձմեռային զվարճանքներից են օգտվել:Բայց հիմա միայն աշխատում ենք հայերի հետ,իսկ արտերկրացիներին տրամադրում եմ գործընկերներիս:

11.Ապագայում կա՞ն զրասենյակ ունենալու պլաններ:

-Այո, ունենք զրասենայի պլաններ:Եթե երկրի վիճակը լավանա,կփորձենք ստեղծել լավ զրասենակ Հրազդանի տարածքում, որպեսզի հեշտ և հասանելի լինի մեր հրազդանցիների համար:

12.Քանի՞ տարվա լիցենզավորում ունի Ձեր կազմակերպությունը:

-Կազմակերպությունը լիցենզավորվել է անցյալ տարի, և ամեն տարի թարմացվում է նոր օրենքով:

13.Բավարարվել են արդյո՞ք Ձեր սպասված ակնկալիքները որոնք ունեցել եք կազմակերպության սկզբում:

-Ճիշտն ասած միշտ այս խառը իրավիճակը , բավարար էին,բայց հիմա՝ դեռևս ոչ:

14.Եվ վերջին հարցը, ունե՞ք ընտրված լոգո, պաշտոնական հարթակ և այլն:

-Այո ունենք, բայց մոտ 1-2 ամսից պատրաստ կլինի ամբողջովին նոր կայքը՝ Extreme tour.am-ը, որը կունենա նոր լոգո,կարգախոս և ամբողջ ինֆորմացիան,որը կվերաբերի մեր տուիստական կազմակերպությանը:

Հետազոտական աշխատանք իրականացնող Խմբի անդամներ՝ Վերոնիկա Դանիելյան,

Սոնա Հայրապետյան,Արևիկ Բաղդասարյան